

ՍՈՒՏ ԷՐ, ԵՂԲԱՅՐ*

Սո՛ւտ էր, եղբայր, տեսիլքն այն, որ ինձ տեսար գերվելիս
 Կամ ճամփեքին գերության՝ ուժից ընկած ու փռոտ,
 Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար ինձ՝ կարոտից այրվելիս,
 Դեմքս մռայլ ու տխուր ու հայացքս մշուշոտ:

Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար ինձ՝ մահամերձ ու հյուժված
 Մեռնողների շարքի մեջ, որպես շնչող մի կմախք,
 Սո՛ւտ էր, եղբայր, երբ տեսար հորդ արցունքից դեմքս թաց,
 Մահը թառած ուսերիս՝ բոփ նման թևը կախ:

Սո՛ւտ է, ընկեր սիրելի, որ դեռ գերի ենք հիմա,
 Եվ շողում են մեզնից վեր օտար արև ու լուսին,
 Մտտ ես և դո՛ւ, որ նստած անհա տխուր իմ դիմաց
 Մտորում ես անընդհատ ինձ հետ մեկտեղ-միասին:

Սո՛ւտ են և այս սըրբատամ ժանգոտ լսրերն ամրապիրկ,
 Որ մեր ճամբարն են վաստում դասի ապատ աշխարհից,
 Սո՛ւտ է և այն, որ հիմա մերոնք տանը հանդարտիկ
 Արտասվում են ու սգում սրտանորմոք մշտերից:

Դա երազ էր մի մթին, ծանր կոշմար ու ցնորք,
 Չի՛ արտասվել իմ հոգին արևի տակ դեռ տրտում.
 Տե՛ս, քայլում ենք ես ու նա Երևանից դեպի Նորք,
 Որ երբ իջնի երեկոն, կրկին դառնանք դեպի տուն:

Կրկին վառենք լույսը մեր, նստենք շուրջը սեղանի,
 Կարդանք Տերյան, Վարուժան, Սիամանյոն ու Դուրյան,
 Մինչև քունը ծռարե իր աչքերը գեղանի,
 Դառնան երազ ու տեսիլք կարոտները մեր բուրյան:

Իսկ վաղորդյան թարմ օդում, երբ սարյակը ճովողե,
 Երբ ծիտիկներն արթնացած երգեն բազմած թթենուն,
 Կրկին ժպտան իմ առաջ իր բիբերը խաղողե,
 Լցնելով իմ հոգու մեջ մի քաղցրատանջ խենթություն:

Ու դուրս ելնեմ ես տանից, գործի գնամ երգելով,
 Մտրբ էջերը համբուրեմ մատյանների ձեռագիր,
 Որ պրուցեն հոգուս հետ՝ դրվագներով սիրտ գերող
 Հանձարները մեր անցյալ, գուսանները տարագիր:

* Հաճույքով հրատարակում ենք Ասատուր Սեպուհյանյանի հայրենասիրական սույն ջերթվածը, որը հանգուցյալ գիտնականի բանաստեղծական վավերական տաղանդի արտահայտություններից մեկն է՝ գրված Հայրենական պատերազմի տարիներին:

Որ խոյանա իմ առաջ Նարեկացին՝ որպես սար,
Դարերի մույժն իր բաշին, կրծքին սաավիղ հոգնաղի,
Որ Մասիսը մեր տեսնեմ Աստծու գահին հավասար,
Եվ ի՛նքն՝ Աստված նախանձե մեր սրտաբուխ ծիծաղին:

Որ շնչան նախնիքս ինձ ջրթունքներով հուր բոցի,
Երկինքն ի վար թավալած բաժակները դառնության.
«Մենք շանթեր ենք—երկնված Ապտոության Հնոցից,
Անմատուց է մեր հոգին շղթաներին բռնության...»:

Սո՛ւտ էր, եղբայր, տեսիլքն այն, որ ինձ տեսար գերվելիս
Կամ ճամփեքին գերության՝ քրտնաթաթախ ու փոշոտ,
Ցնորք էր այն, որ տեսար ինձ՝ կարոտից այրվելիս,
Դեմքս մռայլ ու տխուր ու հայացքս մշուշոտ:

Սո՛ւտ է և այն, որ հիմա, սրտի անմար դողոցով,
Ես գրիչս եմ թաթախում հույզերիս ծով կարոտում,
Չէ՞ որ գուցե հենց հիմա, ե՛ս, Արուսյան փողոցով,
Անհոգ մի երգ շուրթերիս, շտապում եմ դեպի տուն...

ԱՄԱՏՈՒՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

